

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Թրամփի Չախող Նախագահութիւնը Հասաւ Աւարտին

Յունուար 20-ին, Ուաշինգթոնի ժամով կէսօրուայ ճիշդ ժամը 12-ին, 60 Պայտըն Քափիթոլի շէնքի պատշգամներուն վրայ տալով իր երդումը կը դառնայ Ամերիկայի 46-րդ նախագահը: Նոյն օրը երդում կու տայ նաեւ Քամալա Հարրիս, դառնալով Միացեալ Նահանգներու առաջին կին փոխ-նախագահը:

Նոյն պահուն կը փակուի Տանուլտ Թրամփի քառամեայ պաշտօնավարութեան էջը, որու ընթացքին երկիրը անցաւ բազմաթիւ փոփոքորիկներէ ու փորձութիւններէ: Վերջինը Յունուար 6-ին, ամբոխի ներխուժում էր Քափիթոլի շէնքէն ներս, այն պահուն երբ Փոխ-նախագահ Մայք Փէնսի գլխաւորութեամբ Ծերակոյտի ու Ներկայացուցիչներու Տան անդամները համատեղ միտ կը գումարէին կատարելու համար իրենց սահմանադրական պարտականութիւնը՝ հաստատելու նոր նախագահի ընտրութիւնը: Թրամփ իր աջ ծայրայեղական կողմնակիցները դրդելով այդ արարքին, վերջին յուսահատական քայլը կատարեց, ոմանց կարծիքով յեղաշրջումի փորձը, մնալու համար աթոռին:

Թրամփ կը հեռանայ Սպիտակ Տունէն ընկճուած ու վարկաբեկուած, մինչեւ վերջ մերժելով ընդունիլ իր պարտութիւնը:

Անցնող չորս տարիներուն Տանուլտ Թրամփ խախտեց բոլոր սովորութիւններն ու կանոնները: Ան անտեսեց երկրի օրէնքները, պաշտօնը օգտագործեց անհատական շահ ապահովելու համար, բարձրաստիճան պաշտօնեաներէն պահանջեց իր անձին հանդէպ հաւատարմութիւն, քաջալերեց ու զօրացուց սպիտակ ցեղապաշտականները ու նացիստական շարժումները, քաղաքականացուց պետական հիմնարկները սկսեալ արդարադատութենէն, հասնելու համար գաղտնի սպասարկութիւնները, նոյնիսկ մարդահամարը եւ համաճարակի դէմ պայքարը: Ան գաղթական ընտանիքներու երեխաները անջատեց իրենց ծնողներէն, իսկ անկախ մամուլը կոչեց «ժողովուրդի թշնամի»:

Թրամփի ընտրութենէն առաջ եղած բոլոր մտավախութիւնները իրականութիւն դարձան: Ան կը հեռանայ ետին ձգելով բաժանբաժան դարձած երկիր, տնտեսական եւ ընկերային մեծ տագնապներ, ահազնացող համաճարակ ու 400 հազար զոհ:

150 տարիներէ ի վեր առա-

Հայաստան Պետք է Կապ Ունենայ Ղարաբաղի Հետ, Կը Յայտարարէ Լաւրով

Յունուար 18-ին, անցեալ տարուայ ամփոփման նուիրուած ասուլիսի ժամանակ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով յայտարարեց որ, Հայաստան պէտք է կապ ունենայ Ղարաբաղի հետ, իսկ խաղաղապահները կը զբաղին հայ գերիններու հարցով: Սակայն քանի հայ գերի կայ Ատրպէյճան այսօր՝ յայտնի չէ, ինչպէս նաեւ յայտնի չէ՝ երբ հայ գերիները պիտի վերադառնան տուն:

Պատասխանելով հայ լրագրողի հարցին՝ Լաւրով նաեւ ընդգծեց, որ Նոյեմբեր 9-ի եռակողմ համաձայնագրութեան մէջ Ղարաբաղի կարգավիճակը չէ յիշատակուած գիտակցուած, այդ հարցը ապագային քննարկուելիք հարց է: Այսօր Ղարաբաղի հայկական կողմին մնացած տարածքը ռուսական խաղաղապահներու պատասխանատուութեան գօտի է, եւ այս է այսօր Ղարաբաղի կարգավիճակը, կարգավիճակը պէտք է որոշուի ԵԱՀԿ Մինսքի խումբի ներքոյ անցնող բանակցութիւններու հետեւանքով, յայտարարեց ՌԴ ԱԳ նախարարը՝ աւելցնելով, թէ Լեռնային Ղարաբաղը Ռուսաստանի կազմէն ներս ներառելու հարց «նոյնիսկ մօտէն չկայ» Մոսկուայի օրակարգին վրայ:

Պատասխանելով ատրպէյճանցի լրագրողի հարցին՝ արդեօք հայաստանցի պաշտօնեաները իրաւունք ունին՞ այցելելու Ղարաբաղ եւ այնտեղ յայտարարութիւններ ընելու, Լաւրով ըսաւ, որ Հայաստան պէտք է կապ ունենայ Ղարա-



Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լաւրով

բաղի հետ, եւ այս այն հարցն է, որ երբեք չէ քննարկուած: Ակնյայտ է, որ այդ կապը պէտք է ըլլայ, եւ հայաստանցի պաշտօնեաները, որոնք ներգրաւուած են նաեւ Ղարաբաղի մարդասիրական գործընթացներուն մէջ, Ղարաբաղ այցելելու իրաւունք ունին, եւ անոր համար գոյութիւն ունի Լաչինի միջանցքը: Այլ հարց է, որ հաւանաբար պէտք չէ զգացական յայտարարութիւններ ընել Ստեփանակերտի մէջ, աւելցուց Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը՝ վերջիշեւով Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Դաւիթ Տօնոյեանի «նոր պատերազմ՝ նոր տարածքներ» յայտարարութիւնը, հայ-

Պատուաստի Առաջին Խմբաքանակը Հայաստան Կը Հասնի Սէկ Ամիսէն

Իշխանութիւնները կը նախատեսեն ամենաուշը մէկ ամիսէն «Քորոնա» ժահրի դէմ պատուաստի առաջին խմբաքանակը Հայաստան բերել, Առողջապահութեան նախարարութիւնը առաջիմ չէ մանրամասնած, թէ այժմ կիրառուող պատուաստներէն որ մէկը պիտի գնէ:

Նախարարութիւնը կը նախատեսէ առաջին հերթին COVID-ի դէմ պատուաստել վտանգի ենթակայ խումբին պատկանող քաղաքացիները: Յունուար 18-ին «Ազատութիւն»ի հարցերուն պատասխանած տարեց քաղաքացիները կը հետեւին պատուաստներու վերահեռելի նորութիւններուն, անոնցմէ շատեր կը ցանկան պատուաստուիլ: Շատեր կողմնորոշուած են պատուաստներու տեսակներու հարցով. «Ռուսականը եւ ամերիկեանն է լաւ» ըսած են:

Ռուսականը «Սփուլիք V»-ն է, ամերիկեանը՝ «Մոտերնա»-ն, միւս երկու տարբերակները բրիտանական AstraZeneca-ն ու գերմանական BioNTech/Pfizer-ն են: Առողջապահութեան նախարարու-

2021-ը Պետք է Դառնայ Տնտեսական Վերականգնման Տարի. Փաշինեան

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ կայացած խորհրդակցութեան ընթացքին քննարկուած է 2022-ի մաքրոտնտեսական շրջանակը:

Ըստ Փաշինեանին՝ 2020 թուականը, տնտեսական իմաստով, չափազանց խնդիրներով լի տարի մըն էր ոչ միայն պատերազմի բերումով, այլեւ նոր տեսակի «Քորոնա» ժահրի համավարակի պատճառով, եւ 2021 թուականը պիտի ըլլայ տնտեսութեան վերականգնման տարի: «Պէտք է ձեւակերպենք այն անելիքները, որոնք հնարաւորութիւն կու տան յաղթահարել դժուարութիւնները եւ իսկապէս վերականգնել այն տնտեսական ակնկալիքները, որ ունեցել ենք 2020 թուականի յայտնի իրադարձութիւնների հետեւանքով: Մենք ունենք բազմաթիւ տնտեսական մարտահրաւէրներ, բայց ունենք նաեւ բազմաթիւ հնարաւորութիւններ»:

Ֆինանսներու նախարար՝ Ատոմ Զանջուղազեան ներկայացուցած է 2022-ի մաքրոտնտեսական շրջանակի եւ տնտեսական զարգացումներու վերաբերել ընդհանուր կանխատեսումները:


Երկու Հայեր Նշանակուած Են Պայտընի Վարչակազմի Անդամ



Են Պայտընի վարչակազմի անդամ

Ընտրեալ նախագահ Ճօ Պայտըն կը շարունակէ նոր նշանակումներով ամբողջացնելու իր վարչակազմի պաշտօնեաները:

Ճէֆֆ Մարութեան նշանակուած է Պայտընի բնապահպանութեան խումբին, իսկ Այք Հաճինազարեան՝ պիտի դառնայ շրջանային հաղորդակցութեան նախարար:



Այք Հաճինազարեան Են Պայտընի հետ

Մարութեան անցեալին պաշտօններ զբաղեցուցած է մայրաքաղաք Ուաշինկթընի եւ Միացեալ Նահանգներու փոխարդամիջոցներու բաժանմունքներէն ներս:

Այք Հաճինազարեան Պայտընի ընտրապայքարի ընթացքին վարած է Փենսիլվանիա նահանգի արեւմտեան շրջանի մամուլ քարտուղար պաշտօնը:

ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

**Անկարան Փորձում է Միաժամանակ
Խաղալ Երկու՝ ԱՄՆ-ի Եւ ՌԴ-ի Լարերի
Վրայ**

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ռուսական C-400 հակաօդա-
չին պաշտպանութեան համակար-
գերի ձեռքբերումը թուրքիայի
համար վերածուծ է թիւ մէկ
գլխացաւանքի: 2019-ի Յուլիսի
կէսերին սկսուեցին Ռուսաստանի
նորագոյն հակաօդաչին պաշտպա-
նութեան համակարգերի մատակար-
արումները թուրքիայ, ինչը ճգնա-
ժամ առաջացրեց ԱՄՆ-ի հետ այդ
երկրի յարաբերութիւններում:
Մինչ գործարքի կնքումը Ուա-
շինգտոնը պահանջեց հրաժարուել
ռուսական ՀՕՊ համակարգերից եւ
դրա փոխարէն գնել ամերիկեան
«Patriot»-ները: Վերջինս նախ
սկզբից սպառնաց յետաձգել, իսկ
յետագայում՝ նաեւ չեղարկել F-35
կործանիչների վաճառքը թուրք-
իային: ԱՄՆ-ը խոստացաւ նաեւ
պատժամիջոցներ կիրառել, ինչն
էլ արեց 2020 թ. աւարտին: Թուրք-
իային պատժելու եւ խանդ առաջ
բերելու նպատակով ԱՄՆ-ը յայ-
տարարեց, որ նրա համար նախա-
տեսուած այդ կործանիչների
խմբաքանակը կը վաճառի Յու-
նաստանին:

Սակայն Անկարան, անտեսե-
լով այդ ամէնը, ոչ միայն գնեց
առաջին խմբաքանակը, այլեւ դեռ
շարունակում է Մոսկուայի հետ
բանակցութիւնները C-400 ՀՕՊ
համակարգերի երկրորդ դիւրիւ-
նի մատակարարման շուրջ: Օրերս
թուրքիայի պաշտպանութեան նա-
խարար Յուլիսի Աքարը յայտա-
րարեց, որ գնման գործընթացի
ընդհատումը խնդիրներ կ'առա-
ջացնի թուրքիայի համար:

«ԱՄՆ-ից իրավիճակի ըմբռ-
նում ենք ակնկալում: Պատժամի-
ջոցների լեզուն, որը չի համապա-
տասխանում դաշնակցային յարա-
բերութիւններին, անընդունելի է:
Վերագառնալ այն կէտին, որտե-
ղից մեր երկիրը սկսել է, շատ
խնդրաարօց է», - յայտարարել է
Աքարը: Նա նաեւ ԱՄՆ-ին առա-
ջարկել է խնդրի լուծումը գտնել
տեխնիկական մակարդակով բա-
նակցութիւնների միջոցով:

**Ձեզ Իդիոտ Անուանելու Համար Առիթ
Մի Տուէք**

ԱՐԻՍ ՎԱՐԱՐՇԱԿԵԱՆ

Եթէ «Բարգաւաճ Հայաստա-
նը» եւ միւս կուսակցութիւնները
իրապէս ցանկութիւն ունեն հասնե-
լու Նիկոլ Փաշինեանի հրաժարա-
կանին, պէտք է օր առաջ հրաժար-
ուեն իրենց բախատից: Իսկ բախա-
տի անունն է՝ Վազգէն Մանուկեան:
Իհարկէ, մի փոքր շրջահեա-
յացութիւն ունենալու դէպքում
չէին էլ մտնի նման բեռի տակ,
բայց սխալը կէսից հասկանալն էլ
է օգուտ: Երկու ամսից աւել է, ինչ
այդ մարդը հռչակուել է ընդդի-
մութեան առաջնորդ: Բացի վնա-
սից, նա ոչ մի օգուտ չի տուել
ընդդիմութեան հռչակած պայքա-
րին: Նրա ամէն մի յայտարարու-
թիւնից յետոյ ընդդիմադիրները
ստիպուած են կա՛մ խմբագրել նրա
խօսքերը, կա՛մ էլ ներողութիւն
խնդրել նրա փոխարէն:
Վազգէն Մանուկեանն, ըստ
հուլիանի, չունի կուսակցութիւն

Սակայն թուրքիան, իր գոր-
ծելաոճին հաւատարիմ, C-400-երի
գործարքում ի սկզբանէ ունեցել է
հեռահար նպատակներ: Այդ երկրի
պաշտպանական արդիւնաբերու-
թեան քարտուղարութեան ղեկա-
վար Իսմայիլ Դեմիրը վերջերս
յայտարարեց, որ թուրքիան պատ-
րաստ է Ռուսաստանից գնել C-400
հակաօդային պաշտպանութեան հա-
մակարգերի երկրորդ խմբաքանա-
կը, եթէ իրենց փոխանցուի նաեւ
դրանց պատրաստման տեխնոլոգի-
ան: Նկատենք, որ մինչ այդ
թուրքիան ակնարկում էր գնուած
ռուսական ՀՕՊ համակարգերը
ԱՄՆ-ին փոխանցելու մասին, որը,
սակայն, արգելուած է գինատեսա-
կի առքուվաճառքի պայմանագ-
րով: Այժմ թուրքիան բացայայտ
յայտարարում է, որ իրեն պէտք է
C-400-ի տեխնոլոգիան:

Այստեղ միանշանակ է, որ
Ռուսաստանը չի վաճառի այդ
գինատեսակի տեխնոլոգիան, եթէ,
իհարկէ, արդէն չի ստեղծել նոր
սերնդի հակաօդային պաշտպանու-
թեան համակարգերի մէկ այլ
տեխնոլոգիա: Ռուսաստանի կող-
մից տեխնոլոգիաների վաճառքի
մերժումն ինքնատիպ լակմուսի
թղթի էֆեկտ կարող է ունենալ
ռուս-թուրքական յարաբերութիւն-
ներում:

Մի բան միանշանակ պարզ է,
որ թուրքիան, մաներելով երկու
գերտէրութեան միջեւ եւ փորձե-
լով զիջումներ կորզել երկու կող-
մից, ցանկանում է հասնել իր
համար շահեկան լուծումների: Իսկ
ԱՄՆ-ը եւ ՌԴ-ն ուղղակի մրցակի-
ցութեան մէջ են մտել, այս դէպ-
քում՝ գէնքի վաճառքի շուկայում:
Դրա համատեքստում ՌԴ ԱԳՆ
պաշտօնական ներկայացուցիչ Մար-
իա Զախարովան իր վերջին ասու-
լիսում նկատեց, որ թուրքիայի
դէմ ԱՄՆ պատժամիջոցները եւս
մէկ անգամ ցոյց են տալիս արդար
մրցակցութեան պայմաններում գոր-
ծելու՝ Ուաշինկթոնի անկարողու-
թիւնը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

կամ թիւմ: Նրա միակ լուծման
ընդհանուր գործին պէտք է
լինէին քաղաքական տեքստերը եւ
խօսքը: Մինչդեռ, այսօր այդ քա-
ղաքական խօսքը դարձել է ընդ-
դիմութեան ամենամեծ խնդիրնե-
րից մէկը: Իր ազդեսիւ, չհաւասա-
րակշռուած խօսքով Մանուկեանը
հիմնաւորում է հասարակութեան
վախերը հների վերադարձի դէպ-
քում: Մարդիկ մտածում են՝ եթէ
յաւակնորդը հիմա մարդկանց
անուանում է բոմբ, ինչ կ'անի
իշխանութիւն ունենալու դէպքում:
Ընդդիմադիրները պէտք է մի
փոքր ուսումնասիրեն Հայաստանի
նորագոյն պատմութիւնը եւ հաս-
կանան, թէ ինչ քաղաքական ապա-
գայ են ունենում Վազգէն Մանուկ-
եանի դաշնակիցները: Եթէ «Բար-

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնետր հոն արտայայտուող բոլոր միտքերը

**Ռուսաստանը Մերժեց Ալիեւին.
Ռուսաստանն Ունի Հայաստանի
Կարիքը**

ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՄԻ

ՌԴ արտգործնախարար Սեր-
գեյ Լաւրովը յայտարարել է, որ
Հայաստանի եւ Արցախի միջեւ
անխափան կապի հարցը երբեք չի
ենթարկուել կասկածի որեւէ
քննարկման ժամանակ եւ, ըստ
այդմ, չկայ որեւէ պատճառ, որ
հայ պաշտօնեաները չայցելեն Ար-
ցախ: Ըստ նրա, դրա համար էլ կա
Լաչինի միջանցքի ապահովման
հանգամանքը, եւ բոլորը արտա-
յայտուել են դրա կողմ: Սերգեյ
Լաւրովն, ըստ հուլիանի, պատաս-
խանելով ատրպէյճանցի լրագրողի
հարցին, պատասխանել է Ատր-
պէյճանի նախագահի պաշտօնը զբա-
ղեցնող Իլհամ Ալիեւի այն յայտա-
րարութեանը, թէ հայ պաշտօնեա-
նների Արցախ այցելող անօրինական
են եւ դրանք շարունակուելու
դէպքում Պաքուի արձագանքը կը
լինի աւելի կոշտ: Ռուսաստանը,
փաստօրէն, Պաքուին պատասխա-
նել է դիւանագիտական կոշտու-
թեամբ, ըստ հուլիանի, խորքային
առումով հիանալի պատկերացնե-
լով խնդիրը: Այդ մասին մենք
խօսել էինք օրեր առաջ, որ
Հայաստանն ու Արցախը կտրելու
նազմավարութիւն հետապնդելով,
Ալիեւը եւ Էրտողանն, ըստ հու-
լիանի, իրականացնում են Ռու-
սաստանի՝ արցախեան ներկայու-
թիւնը իրաւա-քաղաքական եւ
դիւանագիտական մակարդակում
ապալեգիտիմացնելու, այլ կերպ
ասած, նաեւ Ռուսաստանի ոտքը
Արցախից կտրելու նազմավարու-
թիւն:

Հայաստանի ու Արցախի կա-
պը կտրելն, ըստ հուլիանի, նշանա-
կելու է հենց դա՝ Արցախում նաեւ
Ռուսաստանի ապալեգիտիմացում:
Այդ նազմավարութիւնը մաս է
յայտարարութիւնների, որ Ալիեւն
անում է հակամարտութիւնը կար-
գաւորուած լինելու վերաբերեալ:
Ակնառու է, որ յայտարարելով
այդ մասին, նա հեռանկարում հող
է նախապատրաստում հենց Ռու-
սաստանի ներկայութիւնն ապալե-
գիտիմացնելու համար՝ եթէ չկայ
հակամարտութիւն, ապա էլ ինչո՞ւ
է Ռուսաստանն Արցախում: Հետե-
ւաբար, Հայաստան-Արցախ կապը

զաւաճը» կամ վանեցեանը ցանկա-
նում են ընկնել ԱԻՄ-ի կամ ՍԻՄ-
ի օրը, ապա խնդիր չկայ, կարող են
շարունակել Մանուկեանին մաս
տալ Հայաստանի քաղաքներով ու
գիւղերով:
Վազգէն Մանուկեանի մէջ մար-
դիկ ոչ թէ Նիկոլ Փաշինեանին
այլընտրանք են տեսնում, այլ ԶԻՅ
նախագահ Ֆուադին, ով նաեւ չի
կարողանում զսպել իր հանրային
խօսքն ու ատելութիւնից բացի
ուրիշ բան չի տարածում:
Ընդդիմադիրները պէտք է
ընդունեն իրենց սխալը, ազատ-
ուեն Մանուկեանից եւ ռեբրեդին-
գի ենթարկեն իրենց հռետորաբա-
նութիւնը: Հակառակ պարագա-
յում, Սերժ Սարգսեանը էլի որոշ
մարդկանց կ'անուանի իրիտոններ
(Ապուշ Խ.):
«ԶՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

հական նշանակութիւն ունի Մոսկ-
ուայի համար: Իհարկէ, ակնառու է
նաեւ, որ Ռուսաստանն աշխատելու
է Արցախում ուղիղ ազդեցութեան
աստիճանը ընդլայնելու եւ խո-
րացնելու համար, եւ դա բխում է
նաեւ նոր իրողութիւններից, սա-
կայն առնուազն տեսանելի ապա-
գայի հեռանկարով Հայաստան-Ար-
ցախ կապի ապահովումը Ռուսաս-
տանի համար ապահովում է Արցա-
խում իր ներկայութեան ռազմա-
քաղաքական լեգիտիմութիւնը,
նաեւ իրաւա-քաղաքական համա-
տեքստի առումով: Ռուսաստանի
արտգործնախարարի յայտարարու-
թիւնը այդ իմաստով մերժողա-
կան պատասխան է Ալիեւին, ինչը,
սակայն, ամենեւին չպէտք է
հանգստացնող կամ փափուկ բար-
ձի դեր խաղալ Հայաստանի հա-
մար, որովհետեւ մշտապէս պէտք է
աչքի առաջ ունենալ Ռուսաստանի
եւ թուրքիայի՝ Պաքուի միջոցով
կամ առանց դրա պայմանաւոր-
ուելու հաւանականութիւնը, ըստ
այդմ՝ Հայաստան-Արցախ կապի
համար աշխատելով Մոսկուայի
հետ, Երեւանը պէտք է հնարաւո-
րինա արագ փորձի ձեւաւորել
աշխատանքային այլընտրանքներ
այն պահի համար, երբ Մոսկուան
ինքը դադարեցնի աշխատանքը:
Ալիեւն, հենց այլընտրանքները
կ'ապահովեն, որ Մոսկուան Հա-
յաստան-Արցախ կապի հարցում
չդադարի ունենալ դրա կարիքն
ու Հայաստանի հետ աշխատանքի
անհրաժեշտութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՍԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

«Ա1+»-Ը Հերթական Անգամ Չստացալ Հանրապետական Սփռման Արտոնագիր

2002-ին ի վեր եթերազրկուած «Ա1+»-ը կրկին անգամ չստացալ հանրապետական սփռման արտոնագիր, Հանրային 2-րդ հեռատեսիլային կայանը գրկուեցալ եթերէն, «Արմնիւզ»-ի ու «5-րդ ալիք»-ի միաւորները չբաւարարեցին հանրապետականի համար՝ արտոնագիրը տրուեցալ միայն մայրաքաղաքային սփռման համար:



Հեռուստատեսութեան եւ ռատիոյի ազգային յանձնաժողովը մրցոյթ յայտարարած էր 6 տեղ հանրապետութեան եւ 9 տեղ մայրաքաղաքային ծածկոյթի համար: Կնքուած միջկառավարական պայմանագրով հանրապետական սփռման արտոնագիրներէն 1-ը, իսկ մայրաքաղաքայինէն՝ 2-ը, ռուսական հեռուստաընկերութիւններուն տրուեցալ՝ առանց արտոնագրի, մնացած տեղերը բաշխուեցան հետեւեալ կերպով՝

Հանրապետական սփռման 5 տեղերու համար առաջին առաւելագոյն միաւոր հաւաքած ընկերութիւններն են. «Արմենիա», «Երկիր Մեդիա», «Շանթ», ATV եւ «Կենտրոն» հեռուստաընկերութիւնները:

Մայրաքաղաքային սփռման համար 7 տեղերը ըլլալու հնարաւորութիւն ստացան «5-րդ ալիք»-ը, «Արմնիւզ»-ը, Freenews-ը, «Արփի Մեդիա»-ն, «Դար 21»-ն ու «Մո թիվի»-ն: Այստեղ 1 տեղ թափուր մնաց, որու համար լրացուցիչ մրցոյթ կը յայտարարուի մեկ ամիսէն:

Յանձնաժողովը կրկին չցանկացալ եթերով տեսնել «Ա1+»-ին, չընդունեց, որ այդ հեռուստաընկերութիւնը կայացած, անկախ ու իր լարանը ունեցող ընկերութիւն է եւ ունի բոլոր հնարաւորութիւնները արհեստավարժ մակարդակով հանդէս գալու համար:

«Երբ «Ա1+»-ը նախորդ տասնամեակներու ժամանակ չէր ստանում եթեր, մենք հասկանում էինք, որ դա քաղաքական ենթաթեքսթ ունի եւ մենք համոզուած էինք, որ այդ հեռուստաընկերութիւնը ուղղակի քաղաքական ճնշման է ենթարկուած: Ինչո՞ւ հիմա չստացալ «Ա1+»-ը, ես կարծում եմ, որ քանի որ յանձնաժողովի անդամները մեծամասնութիւնը յամենայնդէպս

դեռ այն ժամանակուայ մարդիկ են, իրենք չկարողացան իրենց մէջ յաղթահարել այդ արգելքը», - նշեց Ոսփի ազատութեան կոմիտէի նախագահ՝ Մելիքեան:

«Ազատութիւն»ի հարցին, թէ տարբերութիւնը ինչո՞վ է ակնյայտ, Աշոտ Մելիքեան պատասխանեց. «Ակնյայտ է նրանով, որ օրինակ՝ Ռոպերթ Քոչարեանի օրօք հնարաւոր չէր որեւէ ընդդիմադիր ուղղութեան հեռուստաընկերութիւն ունենալ, Սերժ Սարգսեանի օրօք նոյնպէս: Հիմա ամբողջ մասնաւոր հեռուստաեթերը ընդդէմ իշխանութիւններին է»:

Անդրադառնալով հանրապետական եթերի մրցոյթը չյաղթահարած Ա1+-ին, Հեռուստատեսութեան եւ ռատիոյի ազգային յանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Յակոբեան ըսաւ. «Ա1+-ը այն հեռուստաընկերութիւններից էր, որը Հայաստանում շատ մեծ դեր խաղաց անկախ մետիայի կայացման գործում: Դա չի քննարկուում: Եւ 2001-2 թուականներին քաղաքական կողմնորոշուած որոշումներ էին ընդունուել: Դա յստակ է: Տեխնիկական եւ ֆինանսական պահանջները է եւ եղելզգզգ ես չեմ յիշում ինչ-որ բաներ, որոնք ազդել են թուանշանների իջեցման վրայ: Թուանշանները բաւարար են եղել հանրային բազմապատիկ տեղ գրադեցնելու համար: «Ինչո՞ւ չէր գրադեցրել Ա1+-ը» հարցը հաստատ յանձնաժողովին չէ»:

Աւելի վաղ Ա1+-ի հիմնադիր՝ Մեսրոպ Մովսէսեան «Ազատութիւն»ին ըսած էր, որ նոր կառավարութիւնը պէտք է ընդունի նախորդի սխալն ու շտկէ իրավիճակը:

Կրճատուած Է Անվտանգութեան Գերատեսչութիւններէ Երեքի Ֆինանսաւորումը

Անցեալ տարուայ արցախեան պատերազմէն յետոյ Հայաստանի իշխանութիւնները կրճատած են երկրի անվտանգութիւնը ապահովող չորս գերատեսչութիւններէն երեքի ֆինանսաւորումը:

Անցեալ տարուայ պետական պիւտճէի հետ համեմատած՝ այս տարի կրճատուած են Արտակարգ իրավիճակներու նախարարութեան, Ազգային անվտանգութեան ծառայութեան եւ Ոստիկանութեան պիւտճէները, աճած են Պաշտպանութեան նախարարութեան յատկացումած ֆինանսական միջոցները:

Ամէնէն շատ կրճատուած են Արտակարգ իրավիճակներու նախարարութեան յատկացուած միջոցները՝ 7.2 տոկոսով: Եթէ այս տարուայ պետական պիւտճէով նախարարութեան յատկացուած է 14.1 միլիարդ դրամ, ապա նախորդ տարուայ պիւտճէով սահմանուած էր

15.2 միլիարդ դրամ: Յաջորդը Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնն է. պիւտճէն կրճատուած է 1.1 տոկոսով. այս տարի ծառայութեան յատկացուած է 34.7 միլիարդ դրամ, 2020-ի ԱԱԾ պիւտճէն սահմանուած էր 35.1 միլիարդ:

Ուժայիններէն ամենաքիչը կրճատուած է Ոստիկանութեան ֆինանսաւորումը՝ 0.9 տոկոսով: Այս տարուայ պետական պիւտճէով յատկացուած է 64.6 միլիարդ դրամ, անցեալ տարի 65.2 միլիարդ էր:

Փոխարէնը աճած է Պաշտպանութեան նախարարութեան պիւտճէն՝ 1.4 տոկոսով: 2021-ի պետական պիւտճէով վաղարշակ Յարութիւնեանի գլխաւորած նախարարութիւնը պէտք է ստանալ 311.6 միլիարդ դրամ, իսկ անցեալ տարուայ պետական պիւտճէով Պաշտպանութեան նախարարութեան պիւտճէն 307.2 միլիարդ էր:

Արսէն Թորոսեան Ազատուած Է Նախարարի Պաշտօնէն. Առողջապահութեան Նախարար Նշանակուած Է Անահիտ Աւանեսեան

Առողջապահութեան նախարար՝ Արսէն Թորոսեան ազատուեցալ գրաւած պաշտօնէն եւ անմիջապէս նորը ստացալ, այսուհետեւ ան կը ղեկավարէ վարչապետի աշխատակազմը՝ փոխարինելով էտուարտ Աղաջանեանին:



Առողջապահութեան Նախարար Անահիտ Աւանեսեան

Նախագահ Արմէն Սարգսեանի հրամանագրով՝ առողջապահութեան նախարար նշանակուեցալ Թորոսեանի առաջին տեղակալ՝ Անահիտ Աւանեսեան:

38-ամեայ Արսէն Թորոսեան նախարարի պաշտօնը ստանձնած էր 2018-ի թաւշեայ յեղափոխութենէն անմիջապէս յետոյ՝ Մայիս 12-ին: Ան իշխող «Քաղաքացիական պայմանագիր» (ՔՊ) կուսակցութեան վարչութեան անդամ է: Թորոսեանի՝ պաշտօնէն հրաժարելու մասին լուրերը կը շրջանառուէին դեռ ամառուընէ, իսկ Նոյեմբեր ամսուն, երբ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտնեց, որ կառավարութեան կազմէն ներս փոփոխութիւններ պիտի կատարէ, այդ խօսակցութիւնները աւելի աշխուժացան:

Առողջապահութեան արդէն

Գագիկ Զհանգիրեան՝ ԲԴԽ Անդամի Թեկնածու

Ազգային ժողովի իշխանական «Իմ քայլ»-ը Բարձրագոյն դատական խորհուրդ (ԲԴԽ) անդամի պաշտօնին որոշեց առաջադրել նախկին զինուորական դատախազ՝ Գագիկ Զհանգիրեանի թեկնածութիւնը:



ԲԴԽ անդամի պաշտօնին առաջադրուած Գագիկ Զհանգիրեան

«Հանդիպումից յետոյ խմբակցութիւնը խորհրդակցեց եւ որոշեց առաջադրել Գագիկ Զհանգիրեանին որպէս ԲԴԽ թեկնածու», - լրագրողներու հետ ձեպագրուցի ընթացքին յայտարարեց խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց:

Այսօր՝ Յունուար 13-ին, աւելի վաղ, խմբակցութեան պատգամաւորները հանդիպած էին Զհանգիրեանի հետ, տուած էին յուզող հարցերը ու լսած պատասխանները:

Հանդիպումէն յետոյ նախկին զինուորական դատախազը յայտարարեց, որ եթէ ի վերջոյ իշխանական խմբակցութիւնը իր թեկնածութիւնը առաջադրելու որոշում կայացնէ, ինք կ'ընդունի այդ առաջարկը:

«Ես համաձայնել եմ թուական մեծամասնութեան խմբակցութեան կողմից առաջադրուելու հետ, բայց ես գործադիր իշխանութիւն չեմ գնում, քաղաքական պաշտօն չեմ ստանձնում, ես քաղաքական խումբ»:

Կառավարութիւնը Կ'առաջարկէ Ստեղծել Հակաքորուփցիայի Դատարաններ

ՀՀ ազգային ժողովը առաջին ընթերցմամբ ընդունելու համար քննարկեց հակաքորուփցիա եւ վերաքննիչ հակաքորուփցիա դատարաններ ստեղծելու օրէնսդրական փաթեթը:

«Արմէնփրես»-ի հաղորդմամբ՝ կառավարութեան ներկայացուցած փաթեթը խորհրդարանի Յունուար 18-ի նիստին, ներկայացուց ՀՀ արդարադատութեան նախարար՝ Ռուստամ Պատասեան:

«Նախագծերի փաթեթով առաջարկուած է ստեղծել հակաքորուփցիա եւ վերաքննիչ հակաքորուփցիա դատարաններ, ինչի արդիւնքում կ'ապահովուի քորուփցիա բնոյթի գործերով մասնագիտացուած քննութիւնը, ըստ այդմ՝ նպաստելով քորուփցիայի դէմ իրականացուող պայքարի արդիւնաւէտութեան աստիճանի բարձրացմանը: Ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործընթացում մասնագիտացուած թիւին ապահովելու նպատակով առաջարկուած է ստեղծել մասնագիտացուած հակաքորուփցիա դատարան, առնուազն 25 դատաւորի թուականով: Օրէնքի նախագծով նախատեսուում է ստեղծել նաեւ մասնագիտացուած վերաքննիչ հակաքորուփցիա դատարան», - ըսաւ Պատասեան:

ԼՈՒՐԵՐ

Հայաստան կը Հակադարձէ Ատրպէյճանի Նախագահին

Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիևի յայտարարութիւնները ԻՍԵՄՔՕ-ի գլխաւոր տնօրէն Սալիմ Պըն Մուհամմետ ԱլՄալիքի հետ հանդիպման ընթացքին կու գան անգամ մը եւս ապացուցելու, որ Ատրպէյճանի վերահսկողութեան տակ գտնուող տարածքներէն ներս հայկական մշակութային ժառանգութիւնը լուրջ սպառնալիքի տակ է, եւ այդ պետութիւնը չի կրնար ըլլալ մշակութային ու կրօնական յուշարձաններու պատշաճ պահպանութեան երաշխաւորը: Այդ մասին յայտարարած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղտալեան՝ շեշտելով, որ հայկական ժառանգութեան ինքնութեան խեղաթիւրումը «մշակութային թալանի» փորձ է, ինչ որ նաեւ համապատասխան միջազգային իրաւական գործիքներու կոպիտ ոտնահարում է:



Արտաքին Գործոց Նախարարութեան խօսնակ՝ Աննա Նաղտալեան

Չոցներու հաղորդմամբ, մասնաւորապէս յայտարարած է, թէ հայերը «փոխած են մեր քաղաքներու եւ գիւղերու անուանումները, փոխած են նոյնիսկ քրիստոնէական կրօնական յուշարձաններու ծագումը», «փոխած են հին ուտիներու կրօնական ժառանգութեան ծագումը», «հին կովկասեան Աղուանքի եկեղեցիները վերածած են հայկական եկեղեցիներու»:

Յատկանշական է, որ Ալիև յայտարարութիւնը ըրած է կրթութեան, գիտութեան եւ մշակութային հարցերով իսլամական կազմակերպութեան գլխաւոր տնօրէնի ներկայութեամբ եւ փորձած է կրօնական երանգ տալ մշակութային ժառանգութեան պահպանութեան խնդիրներուն, նշած է Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան խօսնակը:

Հայ ժողովրդի մշակութային արժէքների իւրացումը կամ խեղաթիւրումը, հայ ժողովրդի իրաւունքների ոտնահարումը չեն նպաստում տարածաշրջանային խաղաղութեանը: Այս առումով կրօնական սրբավայրերի պատշաճ պահպանութիւնը թէ՛ ֆիզիքական, թէ՛ հոգեւոր տեսակէտից կարող է ստեղծել նախադրեալներ տարածաշրջանում խաղաղութեան համար», - ըստ էն է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակի յայտարարութեան մէջ:

«Հայկական հազարաւոր կրօնական եւ աշխարհիկ յուշարձանները արարուած են Ատրպէյճանի ստեղծումէն դարեր առաջ եւ որեւէ առնչութիւն չունին Ատրպէյճանական ինքնութեան հետ: Այդ յուշարձանները հայ ժողովուրդէն օտարացնելու փորձերը չունին որեւէ մէկ պատմական, դաւանաբանական եւ բարոյական հիմնաւորում:

Յատկանշական է, որ «աղուանացման թէզը» Ատրպէյճան առաջ տարած է նաեւ Նախիջևեանի հայկական խաչքարերու ոչնչացումը արդարացնելու նպատակով, ինչ որ ցոյց կու տայ հայկական յուշարձաններու ինքնութեան ոչնչացման եւ խեղաթիւրման գործելակերպի վտանգաւորութիւնը:

Հայկական կամ տարածաշրջանի այլ ժողովուրդներու քրիստոնէական ժառանգութիւնը աղուանական ներկայացնելու կեղծ գիտական թէզը Ատրպէյճանէն դուրս որեւէ լուրջ շրջանառում չունի եւ ընկալելի չէ միջազգային ակադեմիական հանրութեան համար, - նշած է Նաղտալեան:

Յունուար 13-ին, ԻՍԵՄՔՕ-ի՝ կրթութեան, գիտութեան եւ մշակութային հարցերով իսլամական կազմակերպութեան գլխաւոր տնօրէնի հետ հանդիպման ժամանակ, Ալիև, ատրպէյճանական լրատուամի-

Ըստ Ռուսական «Քոմերսանթ» Թերթի, Երկաթուղագիծը Աւելի Ձեռնտու է Ատրպէյճանին

Ռուսական մամուլը անդրադարձած է տարածաշրջանի փոխադրային ապաշրջափակման եռակողմ աշխատանքային խումբի օրակարգի թեմաներուն: Ռուսական աղբիւրները գրած են, որ աշխատանքային խումբի օրակարգին վրայ առաջնայինը խորհրդային տարիներուն գործող երկաթուղագիծի վերականգնումն է:

Յունուար 11-ին, Մոսկուայի մէջ կայացած բանակցութիւններուն, Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին յայտարարած էր, որ Մոսկուան, Երեւանը եւ Պաքուն կը ձեւաւորեն Լեռնային Ղարաբաղի վերականգնման եւ հետագայ զարգացման աշխատանքային խումբ: Մօտ ատենէն երկիրներու փոխ վարչապետները կը ներկայացնեն տարածաշրջանի փոխադրային ենթակառուցածքի եւ տնտեսութեան զարգացման յատկաժողովներ: Առաջին նիստը տեղի կ'ունենայ մինչեւ Յունուար 30:

«Քոմերսանթ» ներկայացուցած է այդ երկաթուղագիծի քարտէզը: Ան կ'անցնի հայ - իրանական սահմանով եւ թոյլ կու տայ ոչ միայն Ատրպէյճանը կապել Նախիջևեանի եւ Թուրքիոյ հետ, այլ նաեւ Հայաստանը՝ Ռուսաստանի: Ճանապարհի մեծ մասը կ'անցնի Ատրպէյճանի տարածքով եւ բաւականին երկար է: Ռուսաստանի մէջ եռակողմ հանդիպման քուլիսներու ետեւ կը խօսուէր այն մասին, որ Մոսկուան կը քննարկէր Հայաստանը Ռուսաստանի հետ կա-

պող մէկ այլ փոխադրային միջանցք եւս, շատ աւելի կարճ, որ կ'անցնի Ատրպէյճանի հիւսիսային հատուածով: Սակայն այս մասին աւելի մանրամասն ու յստակ տեղեկութիւն դեռ չկայ:

Ինչ կը վերաբերի «Քոմերսանթ»-ի ներկայացուցած երկաթուղագիծին՝ Ռուսաստանցի մասնագէտները կը նշեն, որ թէ՛ տնտեսական առումով, թէ՛ անվտանգութեան առումով այն այնքան ալ ձեռնտու չէ Հայաստանին: Եւ յայտնի չէ, թէ երբ եւ ինչ պայմաններու մէջ Երեւան կը կարողանայ այդ երկաթուղագիծէն օգտուիլ: Ռուսաստանցի փորձագէտները կը գրեն, որ ապագային Ռուսաստանը կարող է ռազմական բեռներ տեղափոխել այս երկաթուղագիծով: Մասնաւորապէս, «Ռիա Նովոսթի»-ն, յղում ընելով Ռուսաստանցի փորձագէտ Նուրիյան Կասիմովին, կը գրէ, թէ ճանապարհներու բացումէն կը շահին բոլոր երեք երկիրները:

«Նախապէս, Ռուսաստանի եւ Հայաստանի կապը տեղի կ'ունենար օդով կամ վրաստանի տարածքով, վերին Լարսով, որ պարբերաբար անհասանելի է: Այժմ երկիրները ցամաքային հաղորդակցութիւն կը ստանան: Այդ կարեւոր է Հայաստանի համար, որպէս ԵՏՄ (Եւրասիական Տնտեսական Միութիւն) առեւտրային դաշինքի անդամ: Եւ Ռուսական ռազմակայանի համար. բեռները պէտք է ըլլաւ տեղափոխել միայն ինքնաթիռներով», - կը բացատրէ Կասիմով:

Անցալ Տարի Հայաստանի Տնտեսութեան Անկումը Կազմած է 8,5 Տոկոս

Անցած տարի Հայաստանի տնտեսութեան անկումը կազմած է 8,5 տոկոս, կառավարութեան նիստէն յետոյ լրագրողներուն յայտնած է տնտեսութեան նախարար՝ Վահան Քերոբեան՝ նշելով անկման ամենաբարձր թիւը, քան մինչ այս ներկայացուցած էին պետական մարմինները՝ կառավարութեան ու Կեդրոնական դրամատան ներկայացուցիչները:

Անցած ամիս Ազգային ժողովի կողմէն հաստատուած 2021 թուականի պետական պիւտճէի համաձայն, 2020 տարին Հայաստանը փակած է 7,9 տոկոս տնտեսական անկմամբ, սակայն այս, վերջնական թիւը չէ: 2020 թուականի տնտեսական անկման պաշտօնական աւարտական գնահատականը կը հրապարակուի այս ամսուայ վերջին:

Երբ 2019-ին հաստատուեցաւ 2020 թուականի պետական պիւտճէն, կ'ակնկալուէր, որ անցած տարին Հայաստանի տնտեսութիւնը փակէ 4,8 տոկոս աճով:

Այսօր Քերոբեանին հարցուցին, թէ անկումը տնտեսութեան ո՞ր ճիւղերուն մէջ աւելի շատ դրսեւորուած է: «Ներմուծում, արտահանում, սպառում: Մօտաւորապէս 20 տոկոս այդ երեք ոլորտներում կայ անկում», - պատասխանեց Քերոբեան:

Իսկ, թէ նախնական տուեալներով որքա՞ն կը սահմանուի տնտեսական անկումը, տնտեսութեան նախարարը արձագանգեց. «8,5 տոկոս տնտեսական անկում կը լինի, իմ կարծիքով»:

Իսկ, թէ 2021 թուականէն ի՞նչ

ակնկալիք կայ, Վահան Քերոբեան պատասխանեց. «Կրկնում եմ՝ իմ կարծիքը եւ իմ լաւատեսութիւնը տնտեսութեան նկատմամբ չի փոխուել: Երկնիչ տնտեսական աճն իմ թիրախն է»:

Ըստ 2021 թուականի պետական պիւտճէին, այս տարի հայաստանեան տնտեսութիւնը կ'աճի 3,2 տոկոսով:

Անցեալ տարուայ տնտեսական անկումն ալ հաշուի առնելով, Հայաստանի Հանրապետութիւնը տնտեսական անկումներ ապրած է հինգ տարի. անկախութեան հռչակման եւ յաջորդած երկու տարիներուն՝ ըստ Վիճակագրական կոմիտէի, 1991-ին՝ 11,7 տոկոս, 1992 թուականին՝ 41,8 տոկոս եւ 1993-ին՝ 8,8 տոկոս անկում: Այնուհետեւ, միջազգային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետեւանքով՝ 2009 թուականին 14,1 տոկոս անկում, եւ 2020-ին:

Կառավարութեան այսօրուայ նիստին, երկրին մէջ ստեղծուած ճգնաժամային իրավիճակի մասին խօսեցաւ նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Ուզում եմ բոլորիս յաջողութիւն մաղթել այս դժուար ժամանակաշրջանում, որպէսզի մեր պարտականութիւնները կարողանանք պատշաճ մակարդակով կատարել եւ երկիրը դուրս բերել ճգնաժամային իրավիճակից: Սրա համար մեզ պէտք է գործադրել առանձնաշատ փոխանցումներ եւ առանձնաշատ փոխանցումներ արձագանգելու եւ կառավարման նոր որակ բերել մեր երկրին, գործադիր մարմինին», - յայտարարեց վարչապետը:

Amnesty International-ի Հաւաստմամբ՝ Արգիլուած Ձեւքեր Օգտագործած Եւ Ղարաբաղեան Պատերազմի Երկու Կողմերը

Amnesty International միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան նոր գեկույցը կը փաստէ, որ Ղարաբաղեան պատերազմի ընթացքին արգիլուած զէնքեր, մասնաւորապէս քասեթային ուղմբեր կիրառած են թէ՛ Ատրպէյճանը եւ թէ՛ Հայաստանը, որու հետեւանքով գոհուած են տասնեակ խաղաղ բնակիչներ:

Կազմակերպութեան փորձագէտները կը պնդեն, որ քաղաքացիական կառույցներու վրայ բազմաթիւ յարձակումներ կը վկայեն, որ անոնք պատահական չէին, այլ ընդհակառակը՝ միւս կողմին վախցնելու կամ ճնշելու ռազմավարութեան մաս կրնային ըլլալ:

Իրաւապաշտպանները փաստագրած են Ատրպէյճանի եւ Հա-

յաստանի կողմէն քասեթային զէնքի ու պայթուցիկներու կիրառման 17 դէպք, որոնց թիրախները ակնյայտօրէն ռազմական կառույցները չէին:

Փաստաթուղթին մէջ նշուած է, որ մէկուկէս ամիս տեւած պատերազմի ընթացքին նմանօրինակ հարուածներու հետեւանքով գոհուած է առնուազն 146 խաղաղ բնակիչ, ներառեալ՝ երեխաներ եւ տարեցներ:

Amnesty International-ը կոչ կ'ընէ Պաքուին եւ Երեւանին հետաքննել խաղաղ բնակչութեան հասցուած բոլոր հարուածները, լրջագոյն ապացուցներու առկայութեան պարագային մեղաւորները յանձնել դատարանին եւ գոհեւորուն տրամադրել փոխհատուցում:

ԱԱԾ-ը Բացայայտած է Մարտի Դաշտն Ապօրինի Կերպով Ձեռք Ձեռք Բերելու և Պահելու Յանցաւոր Խումբ

Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) կը հաղորդէ, որ բացայայտած է իրացնելու նպատակով մարտի դաշտէն ապօրինի կերպով գէնք ձեռք բերելու եւ պահելու յանցաւոր խումբ:

Ըստ հաղորդագրութեան, մասնաւորապէս, Երեւան քաղաքի բնակիչ Ս.Բ.-ն 2020-ի Սեպտեմբեր 27-ին որպէս կամաւոր մասնակցելով Արցախի դէմ սկսուած պատերազմական գործողութիւններուն, շարք մը անձանց հետ ձեռք բերուած նախնական համաձայնութեամբ, իրացման նպատակով, ապօրինի ձեռք բերած է հրազէն հանդիսացող ինքնաձիգներ, որոնք Արցախէն փոխադրած եւ պահած է Երեւան գտնուող իր բնակարանը, որմէ յետոյ՝ 2020-ի Նոյեմբեր 3-ին, Խրաքանչիւր ինքնաձիգը 500-600 ԱՄՆ տոլար գումարով վաճառելու վերաբերեալ պայմանաւորուածութիւններ ձեռք բերած է տարբեր անձերու հետ:

ԱԱԾ-ը կը նշէ, որ դէպքի առթիւ յարուցուած քրէական գործի նախաքննութեամբ կատարուած միջոցառումներու հետեւանքով, մասնաւորապէս՝ Ս.Բ.-ի բնակարանէն ներս կատարուած խուզարկութեամբ յայտնաբերուած եւ առգրաւուած են «Քալաշնիքով» տեսակի ինքնաձիգներ, ռազմամթերք հանդիսացող փամփուշտներ եւ շրջանառութիւնը արգիլուած այլ իրեր:

Քրէական գործին մէջ, որպէս մեղադրեալ ներգրաւուած Ս.Բ.-ին հրազէնները իրացրած անձի ինքնուրոյն պարզելու ուղղութեամբ ձեռնարկուած բազմատեսակ քննչական եւ դատավարական այլ գործողութիւններու հետեւանքով, ինչպէս կը նշէ ԱԱԾ-ը, Սիւնիքի մարզի Տեղ գիւղ գտնուող թաքստոցներուն մէջ յայտնաբերուած է մարտի դաշտէն իրացման նպատակով ապօրինի ձեռք բերուած եւ պահուած ռազմամթերք հանդիսացող մեծաքանակ փամփուշտներ, հրազէն հանդիսացող ինքնաձիգներ եւ շրջանառութիւնը արգիլուած բազմաթիւ այլ իրեր ու

առարկաներ:

Մասնաւորապէս, ըստ ծառայութեան, յայտնաբերուած են մարտի դաշտէն ապօրինի ձեռք բերուած եւ Հայաստան ապօրինի տեղափոխուած ընդհանուր թիւով 43 հատ «Քալաշնիքով» տեսակի ինքնաձիգներ, 279 հատ 7.62 մմ տրամաչափի փամփուշտներ, 7 հատ փամփուշտատուի՝ լիցքաւորուած 7.62 մմ տրամաչափի փամփուշտներով, 23 հատ փամփուշտատուի՝ լիցքաւորուած 5.45 մմ տրամաչափի փամփուշտներով, սուլին դանակներ, զինուորական կողպապաշտակներ, ատրճանակի պատեաններ, 1 հատ փամփուշտատուի՝ թիւով 8 հատ 9 մմ տրամաչափի փամփուշտներով, թիւով 32 հատ փակ տուփերով փոքր չափերու փամփուշտներ, ինքնաձիգներու նշանառութեան համար նախատեսուած տեսողական սարքեր, որսորդական հրացաններ, 227 հատ 7.62 մմ տրամաչափի փամփուշտներ, 1033 հատ 5.45 մմ տրամաչափի փամփուշտներ, 1 հատ նոսակ, որսորդական հրացանի փողեր եւ այլն:

ԱԱԾ-ը կը հաղորդէ, որ կը շարունակէ ձեռնարկել լախոյժ անմիջական հետախուզական միջոցառումներ մարտի դաշտէն ապօրինի կերպով Հայաստանի տարածք տեղափոխուած հնարաւոր այլ գէնքերն ու զինամթերքները յայտնաբերելու եւ ներգրաւուած բոլոր անձանց նկատմամբ քրէական հետապնդումներ յարուցելու համար:

Միեւնոյն ժամանակ ծառայութիւնը կը յորդորէ մարտերուն մասնակցած եւ ռազմական գործողութիւններու ժամանակահատուածին կամ հրադադարի հաստատումէն յետոյ իրենց հետ Հայաստանի տարածք ապօրինի փոխադրած եւ պահած գէնք-զինամթերքը, պայթիւցիկ նիւթերը կամ սարքերը ինքնակամ յանձնել իրաւապահ մարմիններուն, որպէսզի գործողութիւնները օրէնքով սահմանուած կարգով հիմք հանդիսանան անձինքրէական պատասխանատուութեանն ազատելու համար:

Հայաստան Պէտք է Կապ Ունենայ

Շարունակուած էջ 1-էն

կական կողմը ըստ հուշեան անուղղակի մեղադրելով պատերազմը հրահրելու մէջ:

Լաւրովի խոսքով՝ Հայաստան այսօր չկան ատրպէյճանցի գերիներ, իսկ Ատրպէյճան կան հայ գերիներ, եւ նման իրավիճակ ստեղծուած է այն պատճառով, որ Դեկտեմբերի սկիզբին, հայկական կողմը հնարաւոր գերիներու մասին նոր ցուցակ ներկայացուցած է:

«Գերիներու վերադարձի հարցը մանրամասն քննարկուած է Յունուար 11-ին, երկար քննարկումներ եղած են : Ի սկզբանէ հայկական եւ ատրպէյճանական կողմերը պէտք է ներկայացնէին անհետ կորածներու ցուցակներ: Ատրպէյճանական կողմը այդ ցուցակը ներկայացուցած է, իսկ հայկական կողմը՝ ոչ», - ըսաւ Ռուսաստանի ԱԳ նախարարը՝ աւելցնելով, թէ հայկական կողմը այդ ցուցակը աւելի ուշ ներկայացուցած է, եւ

այն ամբողջական չէր:

Լաւրով պնդեց նաեւ, թէ հայկական կողմին վերադարձուած են բոլոր այն ռազմագերիները, որոնք մասնակցած են պատերազմական գործողութիւններուն մինչեւ Նոյեմբեր 10-ը, սակայն յետոյ ստեղծուած է նոր իրավիճակ, երբ ատրպէյճանական կողմը գերեվարած է 62 հայ զինուորականներ, որոնք մասնակցած են Հատրուսի շրջանի յայտնի իրադարձութիւններուն, եւ ատրպէյճանական կողմը կ'ըսէ, թէ քանի որ անոնք գերի ինկած են հրադադարի հաստատումէն յետոյ, այս արդէն նոր իրավիճակ է, որ կապ չունի Նոյեմբեր 9-ին ստորագրուած փաստաթուղթի հետ:

«Այդուամենայնիւ, մենք՝ նախագահ Փութինը եւ ես, առաջ կը քաշենք այս խնդրի կարգաւորումը «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքի հիման վրայ», - ընդգծեց Ռուսաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան ղեկավարը:


Մահացած է Հայրենի Բեմադրիչ Եւ Դերասան՝ Վիգէն Ստեփանեան

68 տարեկանին՝ ուղեղի կաթուածէն մահացած է դերասան, բեմադրիչ, Հայաստանի Հանրապետութեան արուեստի վաստակաւոր գործիչ՝ Վիգէն Ստեփանեան, կը հաղորդէ Պետական կամերային երաժշտական թատրոնը:

Վիգէն Ստեփանեան խաղցած է աւելի քան 100 դեր տարբեր թատրոններու մէջ, բեմադրած է 43 ներկայացում տարբեր երկրներու մէջ եւ տարբեր լեզուներով, նկարահանուած է մօտ 50 շարժապատկերի մէջ, ԽՍՀՄ տարբեր ընկերութիւններու, խաղցած է աւելի քան 60 հեռատեսիլի ներկայացումներ: Երեք տարի շարունակ եղած է «Երեւան-էրեբունի» սօնակատարութեան գլխաւոր բեմադրիչը: Գրած եւ բեմականացուցած է աւելի քան 10 բեմադրութիւն:

«Վիգէն Ստեփանեանի բեմադրութիւնները եղել են մեր թատրոնի խաղացանկի լաւագոյն ներկայացումները», - նշուած է կամերային թատրոնի գլխավոր ինժեներ վրայ տեղադրուած հաղորդագրութեան մէջ:

Ճանաչուած արուեստագէտի մահուան կապակցութեամբ պաշտօնական հաղորդագրութիւն տարածած է Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սփորթի նա-



Արուեստի վաստակաւոր գործիչ՝ Վիգէն Ստեփանեան

խարարութիւնը: «Վիգէն Ստեփանեանը մշակութային հանրութեան ու ժողովրդի լիշողութեան մէջ ընդմիշտ կը մնայ որպէս հրաշալի մտաւորական, դերասանական եւ բեմական արուեստի նուիրեալ եւ նշանաւոր գործիչ:

ՀՀ ԿԳՄՄ նախարարութիւնը ցաւակցում է սիրելի արուեստագէտի հարազատներին, ընկերներին ու գործընկերներին», - մասնաւորապէս ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Պատուաստի Առաջին Խմբաքանակը Հայաստան Կը Հասնի Սէկ Ամիսէն

Շարունակուած էջ 1-էն

թեան ընտրութիւնը առաջին խմբաքանակի համար այս պատուաստներէն որեւէ մէկը կրնայ ըլլալ, այդ նպատակով Հայաստան արդէն պայմանագիր կնքած է միջազգային Covax facility նախաձեռնութեան հետ, որ անձամբ կը բանակցի պատուաստ արտադրողներուն հետ:

Հայաստան պետական պիւտճէին 6 միլիոն տոլար պիտի յատկացնէ՝ Covax facility-էն բնակչութեան 10 տոկոսի չափով պատուաստ ձեռք բերելու համար:

Մինչ նախարարութիւնը պատուաստ ձեռք բերելու շուրջ բանակցութիւններ կը վարէ, գերմանական BioNTech/Pfizer ընկերութիւնը մէկ ամիսով կրկնակի կը կրճատէ «Քորոնա» ժահրի դէմ պատուաստներու արտադրանքը՝ փետրուարի կէսէն արտադրութեան ծաւալները նոր թափով՝ քանի մը անգամ աւելցնելու նպատակով:

Թրամփի Չախող Նախագահութիւնը

Շարունակուած էջ 1-էն

ջին անգամ ըլլալով պաշտօնաւարտ նախագահը ներկայ չի գտնուիր իր յաջորդի երդման արարողութեան, որ կը նկատուի Ամերիկեան ժողովրդավարութեան ու իշխանութեան խաղաղ փոխանցումի խորհրդանշերէն մէկը:

Գեռնալէն Ետք իսկ, Թրամփին կը սպասէ Ծերակոյտէն ներս դատավարութիւն՝ Ներկայացու-

ցիչներու Տան կողմէ երկրորդ անգամ ըլլալով պաշտօնազրկման ենթարկուելէ ետք:

Նման պայմաններու տակ աւարտին կը հասնի Տանուլտ Թրամփի ձախող ու քառսային պաշտօնավարումը, իսկ նոր նախագահին կը սպասէ բազում մարտահրաւերներ՝ ուղղելու համար նախորդի ձգած տխուր աւանդը եւ յաղթահարելու երկրի դիմագրաւած հսկայ դժուարութիւնները:

«ՄԱՍԻՍ»

Գեներալ Գագիկ Մելքոնեան - Նոյեմբերի 10-ին Նոր Հոկտեմբերի 27-ի Փորձ Արուեց, Ծրագիրը Փաշինեանին Սպանելն Էր

ՆՈՒԻՐ ՄԱՅԱԿԱՆԵԱՆ

«Առաջին լրատուական»-ի գրող Գագիկ Մելքոնեանը և պաշտպանութեան նախկին փոխնախարար, գեներալ Գագիկ Մելքոնեանը:

- Դուք ինչպէ՞ս էք պատկերացնում պատերազմից յետոյ Արցախի բանակի կազմաւորումը, համալրումը, հիմա Ատրաշի մարզի հետուից հեռու խօսուած է այդ գործերին միջամտելու մասին:

- Ատրաշի մասը չի ուզում, որ մենք Արցախում գործ ունենանք, մենք չենք կարող Արցախը թողնել առանց պաշտպանութեան, յոյսներս դնել չգիտեմ ում վրայ, մենք պէտք է ունենանք մեր բանակը, եւ մենք ունենք անտեղ Պաշտպանութեան բանակը, առաջին հերթին բանակը պէտք է համալրենք պայմանագրային զինծառայողներով, որպէսզի կարողանանք այդ խնդիրը լուծել:

- Դուք հաստատ պատերազմի մասին աւելի շատ բան գիտէք, քան ես կամ այդ օրերին երեւանում գտնուած մարդիկ, բայց իրականութիւնը իմանալու ձգտումը շատ մեծ է, մարդիկ ուզում են իմանալ ճշմարտութիւնը, ուզում են իմանալ ի՞նչ է կատարուել այս կամ այն ճակատում: Հաստատ հետեւում էք, մէկը մի բան է ասում, միւսը յաջորդ օրը հակադարձում է, եւ ոչ ոք չի կարողանում կողմնորոշուել, թէ ով է դիրքը լքել, ինչու է լքել կամ ով ուր է գնացել, ինչու է գնացել:

- Նախ ասեմ, որ այս պատերազմում պարտուել է մեր ամբողջ հայ ազգը: Երբ պատերազմը սկսուեց, մի սլիք առաջացաւ, ու բոլորը գնացին զինկոմիտեաներ, ինչպէս ապրիլեան դէպքերի ժամանակ, եւ բոլորը ցանկանում էին կամաւորական հիմունքներով գնալ հենց առաջին գիծ, եւ այդպէս թէ՛ ջոկատներով, թէ՛ կամաւորականներով, թէ՛ յետոյ նաեւ ՄՈՒՐ-ը սկսեց աշխատել, հաւաք-

ուեցին եւ բոլորը շարժուեցին դէպի մեր Արցախ աշխարհ: Եւ այնտեղ նրանց ուղարկեցին տարբեր գործասեր: Պէտք է ձեւաւորելին ստորաբաժանումներ, եւ այդ ստորաբաժանումը իրենց ղեկավար կազմով գնար որեւէ կոնկրետ ուղղութեամբ, կոնկրետ գործասի ենթակայութեան տակ, այդ բանը չեղաւ, չձեւաւորուեցին գործասեր, այլ այդպէս խմբերով, վաշտերով գնացին եւ այնտեղ էլ ձեւաւորուեցին գումարտակներ:

- Շատ դէպքեր կան, որ գնացողներին ասել են իզուր էք եկել, հետ գնացէք:

- Այդպիսի դէպքեր շատ են եղել:

- Ինչո՞ւ, տրամաբանութիւնը ո՞րն է: Որպէս զինուորական, ասացէ՛ք՝ առաջնագծում մահացած կամ այդպիսի հրաման տալու իրաւունք ո՞վ ունի:

- Հրամանատարը, ով արդէն մտել է պատերազմական գործողութիւններ մէջ, եւ իր ենթակայութեան տակ ունի օրինակ 500 մարդ, ինքը կարողանում է ղեկավարել այդ 500-ին եւ չի կարող ղեկավարել եւս 500 հոգու, այդ պատճառով այդ ճակատ գնացողներին, երբ ուղարկում էին այդ հրամանատարի մօտ, նա ի վիճակի չէր ղեկավարել նրանց, պէտք է ունենար աւել սպայակազմ, որպէսզի նրանց կարողանար մարտի տանել: Օրինակ՝ մենք գնացել ենք Քելբաջարի ուղղութեամբ եւ երբ գնացինք, արդէն այնտեղ 2000-ից աւել մարդ կար, ու այդ մարդիկ գէնքերը ձեռքներին անտառները լցուած էին, անձրեւի, ձեռք տակ եւ նրանց ընդունող չկար, ղեկավարող չկար:

- Իսկ այնտեղ գտնուող զօրամասերի հրամանատարները:

- Զօրամասի հրամանատարութիւնը կուրի մէջ էր, ամէն մարդ իր ֆունկցիաներն էր կատարում: Դրա համար այդ մարդիկ որ գնում էին, պէտք է գնային իրենց



հրամանատարներով եւ պատրաստի մտնելին մարտի մէջ: Քառասին վիճակ էր: Անտառներից հանել ենք այդ մարդկանց, ուղարկել ենք գիւղեր, դպրոցներում տեղակայել ենք, որ գոնէ ծածկի տակ լինեն, չհիւանդանան: Մինչդէռ, գէնք-գինամթերքի խնդիր չի եղել: Յետոյ նոր կարողացել ենք նրանց հանել առաջին գիծ՝ իրար փոխարինելով, եւ այսպէս այնտեղ կանոնաւորուեց, եւ ամբողջ շրջան կարողացանք պահել անառիկ, չնայած որ այնտեղ էլ հասան այն խօսակցութիւնները, թէ հողերը ծախուած են, ինչի՞ էք կանգնում, ու շէ շուտ փախչելու էք: Այսպիսի խօսակցութիւնները մենք մարեցինք, ասացինք՝ մենք մնալու ենք դիրքերում մինչեւ վերջ, հող ծախողի հերն էլ անիծած:

- Մարտը քիչ է, պէտք է բացայայտել եւ պատասխանատուութեան ենթարկել, հակառակ դէպքում ինչպէ՞ս հասկանալ ով ինչ է արել:

- Պանիկան սկսուել է Զաբաղի լից, միտումնաւոր է արուել, նոյնիսկ հրամակաւոր են եղել պանիկան տարածողները, հիմա արդէն զինուորները պատմում են, անուն-ազգանուններ են տալիս, թէ

որ գեներալն է եղել, որ գնդապետն է եղել: Ու մենք զինուորներին ասել ենք՝ այդ մասին ոչ թէ մեզ ասէք, այլ գնացէք համապատասխան տեղ հաղորդում տուէք...

- Ո՞րն է Շուշիի անկման առեղծուածը:

- Այնտեղ եղել է կանոնաւոր գործ, երկու գումարտակ էլ Մարտակերտից տարան: Այնտեղ եղել են լեգեոնար հրամանատարներ, գեներալներ- Ես մի բան գիտէի, օպերացիա էր պլանաւորուած Սամուէլ Բաբայանի կողմից, մօտ 1500 մարդ էր պէտք, որպէսզի ատրաշի ճանցիները յայտնուէին «մեշուկի» մէջ, ու այդքան մարդ չձարուեց. Ստեփանակերտում 5000 մարդ ճարուեց, որ կարող էին կուրել, բայց Նոյեմբերի 7-ին փախան Երեւան: Ստեփանակերտին գուզահեռ դատարկեցին նաեւ միւս քաղաքները, նոյնիսկ կուրող մարդիկ գէնքերը շարտում, գալիս էին Երեւան:

- Ո՞ւմ հրամանով էին գալիս:

- Նրանց պիտի հարցնենք՝ ում հրամանով էին թողնում փախչում: Այդ ամէն ինչը պիտի պարզուի: Յանձնաժողով պիտի ստեղծուի ու

Շար.ը էջ 14

Տառօսը Էրտողանին

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

2016-ի մարտ ամսուն «Լուսաբաց»-ի մէջ լոյս տեսած «Հիթ-լեռի ընթացքով քալող ամերիկացի» վերնագրով մեր յօդուածին մէջ գրած էինք. «Թրամփի յառաջացուցած ցեղապաշտական ոգին եւ աղմուկը Ամերիկայի մէջ, - որ ձեւով մը նման է Եւրոպայի մէջ ատենօք ուռճացած ոգիին եւ աղմուկին, որոնք հիմնադատակ ցնցեցին ու կործանեցին կառուցները մարդկութեան,- պէտք է իր սաղմին մէջ խեղդել, որպէսզի Հիթ-լեռի ընթացքով քալող այս ամերիկացին չյաջողի եւ վտանգ չգարձած՝ կասեցուի»: Ապա եզրականացնելով այդ յօդուածը՝ ըսինք, թէ «Դուրսէն ներս թափանցելու գող իսլամ ծայրայեղականներու վտանգին համազօր վտանգ են նաեւ Ամերիկան թունաւորելու գող նմանները Թրամփի»:

Մամուլի մէջ երեւցած «Տանըլտը ընտրելի դարձնող Հիլըրին» վերնագրով մեր ուրիշ մէկ յօդուածով մտահոգութիւն յայտնած էինք այն աստե՛ն, որ Հիլըրի Քլինթընի պէս խնդրայարոյց եւ անպարկեշտ Տեմոքրատի թեկնածու մը ընտրելի պիտի դարձնէր Տանըլտ Թրամփի նման անբարոյ եւ

ցեղապաշտ Հանրապետական թեկնածու մը: Եւ այդպէս ալ եղաւ: Այժմ, քաղաքական ճիշդ վերլուծողի յաւակնութեամբ կ'ուզենք հոս յայտարարել, թէ Թրամփը կարելի եղաւ տապալել միայն Պայտընի պէս Տեմոքրատի թեկնածուով մը: Ու հիմա, Պայտընի ընտրութեամբ գոհացած, հառաչանք մը արձակելով՝ Թրամփի հեռացումով խանդավառուած մեզի նմաններուն կ'ըսենք՝ ԲԱՐՈՎ ՊՐՄԱՆՔ (good riddance):

2021-ի Յունուար 6-ին, նախագահ Թրամփի համակիր խուլիզաններուն վայրագ յարձակումը Ամերիկայի Քոնկրեսի Տան վրայ արդիւնքն էր այն կործանանար եւ թունաւոր մթնոլորտին, զոր խելագար Թրամփն ու իր եսասիրութեան ծառայող մարդիկը չորս տարիներու ընթացքին հովհարեցին եւ ստաբանութիւններով աճեցուցին եւ ուռճացուցին:

Նախագահ Թրամփի խոհակիրք արտաքին աշխարհի դաշնակիրները, որոնց գլուխը կը կանգնէր Թուրքիոյ նախագահ Էրտողանը, սանձազերծ գործելու եւ աշխատելու գետին գտան Թրամփի իշխանութեան շրջանին՝ առաջ քշելով ծրագրեր, որոնք կը ծառայէին աշխարհի քաղաքական կայունու-


թեան հիմերը խախտելու: Էրտողան, Փութին եւ ուրիշներ գիտցան «ճիրխտ» խաղալ Թրամփի ամերիկեան աճապարուութեան եւ ամբողջութեան շրջանին՝ Միջին Արեւելքի եւ Կովկասի մէջ աւերներ գործելով ու աւարներ վաստակելով: Իսկ Թրամփի Ամերիկայի ներքին կարգավիճակը աւերող եւ խանգարող օրինազանցութիւնը ծառայեց ստեղծելու խայտառակ իրավիճակ մը, որուն մէջ Ամերիկան ինքզինք երբեք չէր գտած: Պահ մը զանց առնելով Ամերիկայի գործած արտաքին քաղաքականութեան դաւադրութիւններուն կործանիչ անցեալի հաշուեկշիռը՝ մարդ պարտի ընդունիլ, որ աշխարհի լաւագոյն օրէնքներով օժտուած երկիրն է ան, ուր օրէնքին առջեւ կը խոնարհին բոլորը, ներառեալ ամենակարող նախագահը Ամերիկայի: Իր բռնատէրի եւ մենատէրի բոլոր յատկութիւններով Թրամփի նման անձ մը անկարելի պիտի ըլլար փոխարինել ուրիշ երկրի մը մէջ, ինչպէս է պարագան Էրտողանի, Փութինի եւ նմանօրինակ բռնատէրերու: Եւ եթէ Աստուած մի արասցէ Թրամփի վերընտրուէր, հաւատացէք որ աշխարհ նոր Հիթ-լեռ մը կ'ունենա: Վերընտրութեամբ վերաշխուժացած Թրամփի վստահաբար Իրանի դէմ պատերազմ մը անխուսափելի պիտի դարձնէր՝ գոհացնելու հա-

մար Իսրայէլն ու Մոցի արաբական երկիրները, որուն հետեւանքով դժոխքի պիտի վերածուէին Միջին Արեւելքն ու անոր քարիւղին ենթակայ աշխարհը:

Հիմա, երբ միջազգային բեմին վրայ Թրամփեան մեծամտութեան եւ մեկուսացման ամերիկեան քաղաքականութիւնը վերջ կը գտնէ, պիտի սկսի պայտընեան շրջանով աշխարհին հետ կամուրջներ նետելու քաղաքականութիւնը: Յոյսով ենք, որ Տեմոքրատի կուսակցութեան ղեկավար դիրքերուն վրայ գտնուող ներկայ իշխանատէրերը Ամերիկայի,- ինչպէս մեզի բարեկամ ճանչցուած ծերակուտական Ռապըթ Մենենտեզ եւ քոնկրեսական Ատամ Շիֆ,- Պայտընի հետ գործակցաբար, իրենց դրական դիրքորոշումներով կը թեթեւցեն Հայաստանի պարտութեան հետեւանքները Արցախի մէջ: Տանըլտ Թրամփի չծածկեց իր հիացմունքը Էրտողանի հանդէպ՝ ըսելով, թէ ինք էրտողանի հետ լաւ կը քալէ՝ "I get on well with Erdogan": Մինչդէռ նորընտիր նախագահ Ջօ Պայտըն՝ իր 16 Դեկտեմբեր 2019-ի Նիւ Եորք Թայմսի խմբագրական կազմի անդամներուն հետ (New York Times Editorial Board) ունեցած հարցազրոյցին մէջ ըսած էր,

Շար.ը էջ 14

Lavrov: There Will Always be a Land Link Between Nagorno-Karabakh and Armenia



MOSCOW -- The status of Nagorno-Karabakh remains unresolved and it must be a subject of future Armenian-Azerbaijani negotiations, Russian Foreign Minister Sergei Lavrov said on Monday during his annual press conference to sum up the results of his ministry's work in 2020.

In the meantime, he stressed, Karabakh will be protected by Russian peacekeeping forces deployed there after a Moscow-brokered agreement that stopped the Armenian-Azerbaijani war on November 9.

"Precisely because the problem of the status is so thorny it was decided by the three leaders [of Armenia, Azerbaijan and Russia] to circumvent and leave it to the future," Lavrov stated. "The [Russian, U.S. and French] co-chairs of the OSCE Minsk Group must deal with this as well. They have resumed their contacts with the parties and are going to visit the region again."

Continued on page 3

Syunik Is the Backbone of Our Statehood Prime Minister Pashinyan



